ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ
УЧЕНЫЕ ЗАПИСКИ ЕРЕВАНСКОГО ГОСУДАРСТВЕННОГО УНИВЕРСИТЕТА

Երկրաբանություն և աշխարհագրություն 54(1), 2020 *Геология и география*

Աշխարհագրություն

УДК 551.58

ԲՈՒԺԱԿԱՆ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՏԵՂԸ ԵՎ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՏՈՒՐԻԶՄԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Վ. Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ *

ԵՊՀ սոցիալ-տնտեսական աշխարհագրության ամբիոն, Հայաստան

Մեր օրերում բուժական զբոսաշրջության կազմակերպումն իրականացվում է աշխարհագրական տարբեր միջավայրերում, որոնց ուսումնասիրությունը չափազանց կարևոր է: Հոդվածի շրջանակներում կատարվել է վերլուծություն բուժական զբոսաշրջության տեղաբաշխման առանձնահատկությունների վերաբերյալ, աշխարհի տարբեր տարածաշրջաններում, տրվել են չափանիշներ:

***Keywords*:** medical tourism, active tourism, passive medical tourism, medicinal bathing, medical mud.

Խնդրի դրվածքը: Համաշխարհային տնտեսության համակարգում կարևոր դերակատարում ունի զբոսաշրջությունը, որն իր առանձնահատկություններով անմիջական և միջնորդավորված ազդեցություն ունի տնտեսության տարբեր ճյուղերի վրա: Զբոսաշրջությունն ամբողջությամբ ընդգրկված է փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտում և ներառում է մարդկային ռեսուրսի սոցիալապես խոցելի այնպիսի խավեր, ինչպիսիք են՝ կանայք և երիտասարդները: Կարելի է նշել, որ զբոսաշրջության զարգացման արդյունավետ պլանավորումն ու կառավարումը զգալի դեր ու նշանակություն կունենան երկրի կայուն տնտեսական զարգացման ապահովման և այնպիսի սոցիալական խնդիրների լուծման գործընթացում, ինչպիսիք են՝ աշխատատեղերի ստեղծումը, հասարակության եկամուտների ավելացումը, բնակավայրերի համաչափ զարգացումը, աղքատության հաղթահարումը:

Վերջին տասնամյակներում ամբողջ աշխարհում զբոսաշրջության համակարգում մեծանում է բուժական զբոսաշրջության հանդեպ հետաքրքրությունը: Բուժական զբոսաշրջությունն առանձնանում է մի շարք առանձնահատկություններով, որը թույլ է տալիս այն դիտարկել զբոսաշրջության շուկայում որպես ինքնուրույն ոլորտ

Զբոսաշրջության համակարգում առանձնանում են երկու կարևոր ենթաճյուղեր՝ առողջարանային-վերականգնողական և առողջարարական [1, 2] (տես գծապատկեր):

Զբոսաշրջության հիմնական տեսակների մեջ ուրույն տեղ ունի առողջարանային-վերականգնողական զբոսաշրջությունը:

Առողջարանային՝ վերականգնողական հաստատությունը բուժական-խարգելիչ հիմնարկություն է՝ նախատեսված այն հիվանդների համար, որոնք

* E-mail: v.grigoryan@ysu.am

կարիք ունեն բնական բուժիչ միջոցների (կլիմա, հանքային ջուր, բուժիչ ցեխեր), ինչպես՝ ֆիզոթերապիա, բուժական մարմնամարզություն:



Բուժական զբոսաշրջության կառուցվածքը:

Առողջարանները հյուրանոցային տնտեսության մասնագիտական այն օբյեկտներն են, որոնք բացի հյուրանոցային ծառայություններից, մատուցում են հատուկ կարգի սպասարկում, այդ թվում՝ առողջարանային, բուժական և վերականգնողական:

Առողջարանը (սանատորիա, լատիներեն՝ sanare – առողջանալ բառից) սահմանվում է որպես բուժիչ-պրոֆիլակտիկ հաստատություն՝ նախատեսված բուժման, պրոֆիլակտիկայի և բժշկական վերականգնման (ռեաբիլիտացիայի) համար՝ գլխավորապես բնական բուժիչ, ֆիզիկական գործոնների կիրառմամբ [3]:

Առողջարաններում բուժական և պրոֆիլակտիկ նպատակներով օգտագործվում են բնական, բուժական ռեսուրսներ, որոնց շահագործման համար առկա են ենթակառուցվածքների ցանց:

Բուժական զբոսաշրջությունը նպատակաուղղված է կլինիկաներում՝ բարձր որակավորում ունեցող մասնագետների օգնությամբ՝ բուժմանը, թերապիային, ախտորոշմանը և առողջության վերականգնմանը, հասարակության մտավոր և ֆիզիկական վիճակների պահպանմանը:

Առողջարանային-վերականգնողական զբոսաշրջության կազմակերպման հիմքում ընկած են առողջարանային-վերականգնողական ռեսուրսները: Դրանք սահմանվում են որպես բնական կլիմայական գործոնների և արհեստականորեն ստեղծված ենթակառուցվածքի համախմբություն՝ նախատեսված առողջարանային-վերականգնողական և հանգստի միջոցառումների համար, որոնք բնորոշում են բազմաթիվ տարածքներում առողջության ամրապնդման և հանգստի համար անհրաժեշտ կուրորտային համալիրների զարգացման հնարավորություններն ու հեռանկարները:

Առողջարանային-վերականգնողական ռեսուրսներն ապահովում են առողջարանային-վերականգնողական ու հանգստի գործունեությունը՝ բնական կլիմայական գործոնների, ենթակառուցվածքի և կաղրային ներուժի օգտագործման հաշվին [4]:

Հետազոտության արդյունքների վերլուծություն: Բուժական և առողջարարական զբոսաշրջության գլխավոր առանձնահատկությունն այն է, որ դրանք իրենց գործունեությամբ սահմանազատված չեն: Հասկանալի չէ, երբ է ավարտվում բուժական զբոսաշրջությունը և սկսվում՝ առողջարարականը: Այսպես, զբոսաշրջիկը բժշկական կենտրոնում, որը գտնվում է ծովափին, ենթարկվել է վիրահատության: Նա միաժամանակ ստանում է երկու տեսակի ծառայություն՝ ծովափի բժշկական կենտրոնում վիրահատություն (բուժական տուրիզմ), իսկ ծովափում՝ բուժական արևային ու աղի ջրային լոգանքներ (առողջարարական տուրիզմ): Բուժական զբոսաշրջության տարանջատման հիմնական չափանիշը տարածքային տեղաբաշխման անհամապատասխանությունն է: Զբոսաշրջիկի բուժումը կարելի է իրականացնել ցանկացած բժշկական կենտրոնում, որը մասնագիտացված է տվյալ հիվանդության բուժման ուղղությամբ, իսկ առողջարարական լոգանքները կարելի է իրականացնել մեկ այլ վայրում: Այսպես, հիվանդի սիրտանոթային հիվանդության վիրահատությունը կատարվել է Ղրիմի մայրաքաղաք Սիմֆերոպոլում, բայց ամբողջական կազդուրման համար անհրաժեշտ է բուժական ցեխեր կամ տալասոթերապիա, որն իրականացվում է Սակի քաղաքում (Ղրիմ): Մյուս կողմից, երբ բուժական և առողջարարական պրոցեսները համընկնում են նույն տարածքում, որտեղ առկա են երկու անհրաժեշտ աղբյուրներն, տեղի է ունենում համալիրային սպասարկում:

Որպես կանոն, բուժական զբոսաշրջությունն օգտագործում է բազմաթիվ հյուրանոցներ տարբեր կուրորտային վայրերում, որտեղ գործում են մասնագիտացված առողջարաններ՝ բուժական զբոսաշրջության կենտրոններ:

Առողջարանային ծառայությունները դասվում են թանկ ծառայությունների շարքին, քանի որ հիմնվում են բնական բուժիչ, թանկարժեք ռեսուրսների օգտագործման վրա, որոնց շահագործումը պահանջում է բժշկական բարդ տեխնոլոգիաներ: Առողջարանային ծառայությունների տրամադրումը անհնար է առանց հատուկ պատրաստված բժշկական անձնակազմի:

Կուրորտներում կիրառվում է հատուկ մասնագիտացված դիետիկ սնունդ, ինչը նաև պահանջում է հատուկ բժիշկ մասնագետի և դիետոլոգ-խոհարարների առկայություն: Դրա հետ մեկտեղ՝ առողջարաններում պահպանվում է վերականգնողական կենտրոնին բնորոշ ամբողջ կառուցվածքը՝ հանգստացողների բնակեցման հարմարավետ պայմաններ և նրանց հետաքրքիր, զվարճալի ու սպորտային ծրագրերով ապահովումը: Դրա համար էլ հանգիստը կուրորտներում միշտ ավելի թանկարժեք է բուժիչ հանգստի այլ ձևերից: Նման գրավիչ պայմանները նպաստում են կուրորտների օգտագործմանը՝ ոչ միայն առողջարանային-վերականգնողական, այլ նաև ուրիշ նպատակներով [5]:

Բուժական պրակտիկայում, բնական բուժիչ գործոնների օգտագործման հետ մեկտեղ, ներդրվել են ֆիզիոթերապևտիկ, հոգեթերապևտիկ և բուժման այլ մեթոդներ: Փոխվել է նաև հասարակության պահանջը կուրորտների նկատմամբ: Կարևոր նշանակություն են ձեռք բերել ոչ միայն բժշկական ծառայությունները, այլև համարներում հարմարավետության մակարդակը, կուրորտների՝ սպորտային սարքավորումներով զինումը, անիմացիոն ծառայությունների բազմազանությունը: Բժշկական ծառայությունների վրա ազդեցություն ունի նաև նորաձևությունը [6]:

Վերջին ժամանակներս արևմտյան կուրորտներն ուշադրությունը կենտրոնացրել են դեմքի և մարմնի կառուցվածքի ուղղման կոսմետիկ բազմաթիվ ծառայությունների վրա [7]: Ինչպես տեսնում ենք, առողջարանային ավանդական ծառայություններին ավելանում են նոր ծառայություններ, բուժման ու

հանգստի նոր ձևեր, աշխարհում արագորեն աճում է առողջարանային-վերականգնողական զբոսաշրջիկների թիվը:

Ըստ բնական բուժիչ գործոնների բնույթի՝ առողջավայրերը բաժանվում են 3 խմբի [8, 9]. 1) բալնեոլոգիական; 2) ցեխաբուժական; 3) կլիմայական:

Բալենոլոգական առողջավայրում հիմնական բուժական գործոնը հանքային ջրերն են, որոնք օգտագործվում են լոգանքների, ցնցուղման, լողավազանում լողալու, խմելու, ինչպես նաև ինհալացիայի, լվացումների, հոգնաների և ողողումների համար:

Ցեխաբուժական առողջավայրում գործածում են տղմացեխը, քաղցրահամ ջրերի նեխատիղմը, տորֆային, հազվադեպ ջրաջերմային և հրաբխային ցեխերը:

Կլիմայական առողջավայրում բուժմանը նպաստում են տեղանքի աշխարհագրական դիրքը, արևոտ կլիման, ռելիեֆը, անտառը, լեռնային օդը և այլն:

Արևմտյան և Արևելյան Եվրոպայի որոշ երկրներում առանձնացված են հատուկ չափանիշներ այն հյուրանոցների համար, որոնք մասնագիտացել են առողջության պահպանման կամ վերականգման ուղղությամբ: Հատկանշական է Հունգարիան, հատկապես Բալատոն լճի հարավային շրջանը, որտեղ հյուրանոցը պարտադիր պետք է ունենա մեկ տեսակի լոգարան,երկու տեսակի շոգեբաղնիք, գեղեցկության սրահի հինգ տեսակ, հինգ տեսակի թերապևտիկ և նյարդերը թուլացնող, ուժերը վերականգնող սենյակներ [10]: Միևնույն ժամանակ հյուրանոցը պետք է ապահովի առողջարար և էկոլոգիապես անվտանգ սնունդ, մարզական սրահներ: Այժմ Հունգարիայի ավելի քան 50 հյուրանոցներ անցել են որակավորում և կրում են վելնես (Wellness) վարկանիշ [11]:

Այս համակարգն ակտիվորեն կիրառվում է եվրոպական մյուս երկրներում: Այսպիսով, բուժական և առողջարարական զբոսաշրջության գլխավոր առանձնահատկությունը նրանց զբոսաշրջային գործունեության աշխարհագրություն է, որը բնութագրվում է տարածքային ընտրությամբ ու աչքի է ընկնում առավել մեծ ընդգրկվածությամբ:

ՀՀ բուժ-առողջարարական հաստատությունների և համաշխարհային փորձի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ զբոսաշրջության համակարգում բուժականը գնահատվում է որոշակի չափանիշներով, որոնք ներկայացված են աղյուսակի տեսքով:

Բուժական զբոսաշրջության չափանիշները և առանձնահատկությունները

Չափանիշներ	Առանձնահատկություններ
տարածքի բնական ռեսուրսների ներուժը, որը նպաստավոր է բուժման և առողջության կազմակերպման համար	զբոսաշրջիկի երկարաժամկետ ժամանում կուրորտում
բուժումը և առողջության պահպանումը պետք է լինի զբոսաշրջիկի գլխավոր նպատակը	տարիքային խումբը՝ 40 և ավելի
հաճախորդին տրամադրվող զբոսաշրջային ծառայության մեջ առավելությունը տրվում է բուժականին	գնային բարձր մակարդակ
ծառայություն մատուցող կողմը պետք է ապահովված լինի բարձր որակավորում ունեցող բուժանձնակազմով	բուժման ոչ ավանդական մեթոդներ
կազմակերպությունները, որոնք իրականացնում են բուժում, առողջության վերականգնում, պետք է լինեն մասնագիտացված ձեռնարկություն և ունենան թույլտվություն տվյալ գործունեությունը ծավալելու համար	բուժման և հանգստի համատեղում
զբոսաշրջիկը նման հաստատություններում բուժում ստանալու համար պետք է ունենա հիվանդության պատմությունը հաստատող փաստաթղթեր	ապահովագրական ընկերության առկայություն

Աղյուսակից հետևում է, որ զբոսաշրջային այն ընկերությունները, որոնք մասնագիտանում են բուժական նպատակներով, ունեն զարգանալու իրական հեռանկարներ: Քանի որ բուժական զբոսաշրջությունն աչքի է ընկնում ֆինանսական բարձր գներով, ապա այն իր ծառայությունների համար ունի զգալի ֆինանսական միջոցներ, որոնք իջեցվում են պետական կառավարման մակարդակով: Այս մոտեցմամբ զբոսաշրջային կազմակերպությանը վտանգ չի սպառնում, զբոսաշրջիկին տրվում է մատչելի գներով բարձր որակի ծառայություն, իսկ տարածաշրջանի զբոսաշրջային այլ նմանատիպ կազմակերպությունների հետ տեղի է ունենում առողջ մրցակցություն [12]:

Այսպիսի մոտեցումներ են գործում հանրաճանաչ բազմաթիվ առողջավայրերում՝ Կառլովի Վարի, Բալատոն լիճ, Ոսկե ավազներ, Կիսլովոդսկ և այլն: Այս առողջավայրերն ապահովում են սահմանափակ առողջարարական զբոսաշրջային փաթեթներ: Որպես կանոն, հաճախորդները փնտրում են վստահելի զբոսաշրջային ընկերություններ, որոնք մասնագիտացել են որոշակի տարածքում և իրենց գործունեությունն ուղղված է միայն բուժական զբոսաշրջությանը:

Եզրակացություն: Ըստ վերոնշյալի՝

- բուժական զբոսաշրջության առանձնահատկություններից է տարանջատված և համալիրային գործունեության իրականացումը;
- բուժական զբոսաշրջությունն, ի տարբերություն զբոսաշրջության որոշ տեսակների իր գործունեության համար ունի ֆինանսական միջոցներ, որոնք գերազանցապես իջեցվում են պետական կառավարման մակարդակով;
- բուժական զբոսաշրջության համակարգում ընդգրկված են զբոսաշրջության բազմաթիվ տեսակների տարրեր, որոնք ավելի արդյունավետ են դարձնում այն;
- բնության հրաշալիքները, հարուստ պատմաճարտարապետական ժառանգությունն ու բնակչության էթնոմշակութային առանձնահատկությունները նպաստում են վերականգնողական՝ կուրորտային առողջարանային, մարզական, էկոլոգիական, գիտաճանաչողական, բնակչության մասսայական հանգստի զարգացմանը:

Կատարվել են՝

- բնական բուժական ռեսուրսների (հանքային ջուր և պելոիդներ, ցեխեր, կավեր) գնահատում բուժ-կանխարգելիչ և բուժական պրակտիկայում կիրառման նպատակներով;
- հանքային ջրերի և բուժիչ պելոիդների քիմիական կազմի և ֆիզիկաքիմիական հատկությունների ուսումնասիրություն ըստ միկրոկոմպոնենտային, միկրոէլեմենտային օրգանական և գազային կազմի;
- հիդրոմիներալ ռեսուրսների առկա վիճակի և որակի գնահատում;
- հանքային ջրերի և բուժիչ պելոիդների (ցեխեր, կավեր, տորֆեր և այլն) համալիր ֆիզիկաքիմիական հետազոտություններ՝ նոր ժամանակակից միջազգային նորմատիվ պահանջներին համապատասխան;
- բնական և ֆիզիկական գործոնների ազդեցության մեխանիզմների ուսումնասիրություն;
- բնական կուրորտային ռեսուրսների բուժիչ և բնական հանքային ջրերի հանքավայրերի էկոլոգիական վիճակի ուսումնասիրություններ:

Անհրաժեշտ է՝

- ներգրավել ներդրումներ՝ հին առողջարանների վերանորոգման և նոր առողջարանների կառուցման համար;

• բարելավել առողջարաններում սպասարկման մակարդակը, սննդի որակը, կուրորտային հանգիստն ավելի հետաքրքիր դարձնելու նպատակով շատացնել ժամանցի հնարավորություններն առողջարաններում;

• քայլեր ձեռնարկել առողջարանային ծառայությունների գները նվազեցնելու ուղղությամբ՝ բնակչության լայն զանգվածներին այդ ծառայությունները հասանելի դարձնելու և այցելուների թիվը մեծացնելու նպատակով և այլն:

Ստացվել է՝ 05.02.2020
Գրախոսվել է՝ 25.02.2020
Հաստատվել է՝ 10.03.2020

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. https://hy.wikipedia.org/wiki/
2. http://www.eurasianet.org/
3. Деркачева Л.Н., Челнокова Б.И. Лечебно-оздоровительные местности юга Дальнего Востока. *Вестник ДВО РАН*, **5** (2000), 54–63.
4. Жинкин А., Паламарчук О. *Курортное дело, спорт и туризм. Кубань: история, экономика, культура*. Гл. VII. Краснодар (2001), 245–271.
5. Benson H., Stuart E. *The Wellness Book*. N.Y. (1992), 287 p.
6. http://www.med-practic.com/
7. https://regnum.ru/news/economy/2145437.html
8. http://www.patientsbeyondborders.com/medical-tourism-statistics-facts
9. https://arlis.am/
10. Թովմասյան Գ. *Առողջարանային զբոսաշրջության էությունը և զարգացման արդի միտումները*: Տնտեսություն և հասարակություն (2011).
11. Kaufmann E. *Wellness-Tourismus*. Universitat Bern, Band 38 (2001), 29 p.
12. Ведмицкий В.А. *Врачующие воды, целебные ключи*. Дальневосточное книжное изд-во, Сахалинское отделение (1984), 3–68.

В. В. ГРИГОРЯН

МЕСТО И ОСОБЕННОСТИ МЕДИЦИНСКОГО ТУРИЗМА В СИСТЕМЕ ТУРИЗМА

Резюме

Организация медицинского туризма в наши дни осуществляется в разных географических условиях, изучение которых имеет важное значение. В рамках данной статьи производится анализ особенностей размещения центров медицинского туризма в различных регионах мира, а также сделан сравнительный анализ некоторых показателей.

V. V. GRIGORYAN

PLACE AND FEATURES OF THE MEDICAL TOURISM IN THE TOURISM SYSTEM

Summary

Nowadays the medical tourism is organized in different geographical environments and its study is very important. In the article a thorough analysis is performed connected with the medical tourism arrangement features in different regions of the world, standards are determined.